ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 նոյեմբերի 2023թ. թիվ 635-Ա

ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 02.06.2000թ. N 102 հրամանը, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Մարզային ենթակայության կազմակերպություններում մինչև սույն թվականի նոյեմբերի 30-ը անցկացնել 2023թ. տարեվերջյան գույքագրումներ:

2. Գույքագրման արդյունքների հավաստիության, ճիշտ և ժամանակին կատարման պատասխանատվությունը դնել կազմակերպությունների ղեկավարների վրա:

3. Գույքագրումների կատարման վերահսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի համապատասխան վարչությունների վրա:

4. Գույքագրման արդյունքները ներկայացնել մարզպետի աշխատակազմ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 15-ը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

02/11/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. նոյեմբերի 2
ք.Վանաձոր